
ՆՇԽԱՐՆԵՐ ՊՅԱՏԻԳՈՐՍԿ ԳԱՂԹԱԾ
ԱՐՑԱԽԻ ՀԱՅԵՐԻ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ
(Ըստ հեղինակի գրառած նյութերի)*

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

Բանալի բառեր՝ Պյատիգորսկ, Ղարաբաղ, Արցախ, Ռուսաստան, բանասաց, բանավոր ավանդույթ, վիպական, քնարական, ասույթային բանահյուսություն, հայ բարբառ:

Նախաբան

1964 թ. ամռանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտություն և ազգագրություն ինստիտուտի տնօրինությունն ինձ գործուղել էր Ռուսաստանի Ստավրոպոլի երկրամասի Պյատիգորսկ քաղաքը, որպեսզի ուսումնասիրեմ այնտեղ ապրող հայ էթնիկ խմբի ներկայացուցիչների կենցաղն ու բանահյուսությունը: Երբ տեղ հասա, տեղեկացա, որ այնտեղ առանձին թաղամասում ապրում են Ղարաբաղից (Արցախ) գաղթած հայեր: Այդ տարիներին Ղարաբաղը մեզ՝ հայադեմ-մտավորականներին համար անմատչելի էր: Ազերիները հայ հնագետներին և ազգագրագետներին թույլ չէին տալիս գնալ այնտեղ և պեղումներ կատարել, քանի որ նրանք սարսափում էին, որ 1921 թ. իրենց շնորհված այդ չքնաղ երկրամասի բնիկ հայկական լինելը վկայող բազում և անհերքելի փաստեր կհայտնաբերվեն:

Ինձ՝ որպես բանագետ-ազգագրագետի, հետաքրքրում էր, թե նրանք ե՞րբ և որտեղի՞ց են գաղթել Պյատիգորսկ, տեղաբնիկների հետ համակեցության պայմաններում էթնոմշակութային ի՞նչ փոփոխություններ են կրել, և, որ ամենակարևորն է, արդյո՞ք հոգեհարազատ են մնացել իրենց բնօրրանի ավանդույթներին և այլն:

Պյատիգորսկի արցախցի բանասացները

Պյատիգորսկ քաղաքի առանձին թաղամասում բնակվող հայ համայնքի ներկայացուցիչներից առաջինն իմ ուշադրությունը գրավեցին տների առջև նստած արցախցի հայ տարեց կանայք՝ իլիկը ձեռքներին: Նրանք բուրդ էին մանում, որպեսզի, քառ իրենց բնօրրանի ավանդույթի, գունավարդ, գեղեցիկ գորգեր գործեն: Կանայք Ղարաբաղի ինքնատիպ տարազով էին հատկապես, սևի ու կանաչի, նաև սևի ու մանուշակագույնի ներդաշնակ համադրությամբ: Նրանց ճակատնոցները զարդարված էին արծաթյա զրամներով, իսկ «հալավի»՝ շապիկի և «զարայի»՝ վերնազգեստի թևերի եզրերին ագուցված էին արծաթյա զարդանախշերի ձևավոր բոժոժներ: Այդ մեծահասակ կանայք իրենց մեջքերին կրում էին արծաթյա «կյտան»՝ գոտի, որն էլ մշտապես ձխ

* Ներկայացվել է 09. III. 2021 թ., գրախոսվել է 10. III. 2021 թ., ընդունվել է տպագրության 30. III. 2021 թ.:

Հր պահում նույնիսկ զառամյալ կանանց կեցվածքը: Առաջին իսկ տպավորությունն գրավիչ էր և հուսադրող: Մտածում էի, որ արտաքինապես բնօրրանի տեղային երանգը պահպանած այս կանայք, անշուշտ, իրենց հոգում և մտքում անթեղած պետք է լինեն նաև նախնիներից ավանդված հոգևոր արժեքները:

Մտերմիկ զրույցի ընթացքում պարզվեց, որ նրանցից շատերը Գանձակից ու Արցախից գաղթել էին տակավին 1905–1906 թթ. թաթար-ազերիների ոտնձգությունների, ազգամիջյան բախումների պատճառով, իսկ հետագայում՝ 1921 թ., երբ Խորհրդային Միության ղեկավարությունը Ղարաբաղը բռնակցել էր Ադրբեջանին, օրեցօր սկսել էր վատթարանալ հայերի վիճակը՝ տեղի տալով արտագաղթի նորանոր ալիքների։ Թեպետ խորհրդային սահմանադրությամբ բացառվում էին ազգային խտրականության դրսևորումները, սակայն փաստն այն էր, որ ազերիների վարած հայատյաց քաղաքականության հետևանքով հետևողականորեն հայաթափվում էր երկրամասը։ Շատերն աշխատանք և ապահով կյանքի պայմաններ գտնելու հույսով գաղթում էին Բաքու, Սումգայիթ, ինչպես նաև՝ Ռուսաստան։ Պյատիգորսկ քաղաքի մոտակայքում գտնվող, բարեկարգ և ակնահաճո հայկական այդ թաղամասը տեղաբնիկներն անվանում էին «Արմյանսկի Նյու Յորք» («Армянский Нью-Йорк») – «Հայկական Նյու Յորք»)։

Պատրիզորսկում դեռևս XIX դ. երկրորդ կեսին գոյություն է ունեցել հայկական համայնք, կառուցվել է Ս. Թարգմանչաց հայկական եկեղեցին: Հայ բնակչությունը հիմնականում զբաղվել է առևտրով:

Պատրիզորսկում արցախահայ գաղթականներն ապրում էին համեստ, բայց արժանապատիվ ու հայաշունչ կյանքով, խուսափում էին խառնամուսնություններից, թեպետ արդեն նկատվում էին որոշ դեպքեր: Չնայած երեսաները հաճախում էին ուսսական դպրոց, բայց տան խոսակցական լեզուն չարունակում էր մնալ Արցախի զորեղ բարբառը: Տղամարդիկ աշխատում էին տեղի գործարաններում կամ կոլտնտեսությունում, այդ պատճառով իմ բանասացները բացառապես ավագ սերնդի՝ 70–90 տարեկան տնային տնտեսուհիներն էին: Բացառություն էին կազմում երեքամյա Մարգարիտա և Անժեյա Ավագյանց գույգ քույրերը, որոնք թոթովում էին:

Գիտարշավի 20 օրերի ընթացքում ծանոթացել և գրառումներ եմ կատարել ավագ սերնդի 12 բանասացից, որոնց մասին բնութագրական հակիրճ տվյալներն ու նրանց հաղորդած նյութերի խոսքարվեստի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են՝ նշելով նրանց ծննդյան տարեթիվն ու տարիքը:

**Ղարաբաղում ծնված և Պյատիգորսկում բնակվող իմ բանասաց-
ներն էին՝**

Աննա Բազդասարովնա Ակոպովան (ծնվ. 1876 թ.), 88 տարեկան,

Մալկո Մալրիկը (ծնվ. 1897 թ.), 67 տարեկան,

Թանկե (Թանկազին) Սարգսյանը (ծնվ. 1903 թ.), 61 տարեկան,

Վարսենիկ Պողոսյանը (ծնվ. 1904 թ.), 69 տարեկան,

Աստղիկ Հարությունյանը (ծնվ. 1904 թ.), 65 տարեկան,

Հուսիկ Սարգսյանը (ծնվ. 1904 թ.), 60 տարեկան,

Վարդանուշ Գրիգորյանը (ծնվ. 1904 թ.), 60 տարեկան,

Սոնյա Դանիելյանը (ծնվ. 1904 թ.), 60 տարեկան,
Աշխեն Մուսայելի Վանիլովան (ծնվ. 1904 թ.), 58 տարեկան,
Արևհատ Վարդանյանը (ծնվ. 1905 թ.), 59 տարեկան,
Մարգարիտա Ռուբենի Ավագյանցը (ծնվ. 1961 թ.), 3 տարեկան,
Անժելա Ռուբենի Ավագյանցը (ծնվ. 1961 թ.), 3 տարեկան:

Պյատիգորսկ գաղթած Արցախի հայերի բանահյուսության ժանրային և թեմատիկ առանձնահատկությունները

Պյատիգորսկի երկու հազարի հասնող հայ համայնքից գրառել եմ (100 միավոր) բանահյուսական նյութ իրենց բարբառային նրբերանգներով, որոնք թարգմանված են ըստ անհրաժեշտության՝ նշելով բառի ծագումը¹:
Խնդրո՞ւ առարկա նյութերը հետևյալ բնույթի են.

I. Վիպական բանահյուսություն — հրաշապատում հեքիաթներ (6), իրապատում հեքիաթներ (4), առակներ (2):

II. Քնարական բանահյուսություն — օրորոցայիններ (10), սիրային երգեր (20), կենցաղային և ծիսական երգեր (3), հարսանեկան ծես և երգ (1), աշխատանքային երգեր (4), կատակերգեր (3), հայրենասիրական և զինվորի երգեր (10):

III. Ասույթային բանահյուսություն — մանկական թոթովանքներ (2), հանելուկներ (7), առածներ (12), շուտասելուկներ (4), մաղթանքներ (5), օրհնանքներ (7):

I. Վիպական բանահյուսություն բաժնում հրաշապատում և իրապատում հեքիաթներն իրենց սյուժետային բովանդակությամբ ու մոտիվային համակարգով մեծապես առնչվում են Պատմական Հայաստանի և Կիլիկիայի հայ ժողովրդական հեքիաթներին²: Քանի որ XI–XIII-րդ դդ. Մեծ Հայքի հայաբնակ վայրերից, նաև Արցախից հայերի հոսքը դեպի Կիլիկիա վիթխարի չափերի էր հասել³: Այդ առումով ուշագրավ են «Օխց տղան» («Օձ տղան»), «Անմահական ճուրղ», «Իրեք ախպոր հեքիաթը», «Թաքավերեն ախչիգը», «Օվչի Փիրումը» («Որսորդ Փիրումը») և այլ հեքիաթներ, որոնք ևս իրենց նմանատիպ գուգահեռներն ունեն Մայր Հայաստանի և Կիլիկիայի հեքիաթների հետ:

Արցախի հայերի հրաշապատում հեքիաթներն սկսվում են ավանդական «Իյալ ա, չիյալ» («Լինում է, չի լինում») բանաձևով, սակայն ոչ միշտ են ավարտվում «Երկնքից ընկավ երեք խնձոր» վերջաբանով, այլ՝ որևէ գործողությամբ. «Էն տղեն կապրմ ըն ծիանը հաքյվան, պէց թողնում հարգանի դաշտերը» («Էն տղին կապում են ձիու պոչից և բաց թողնում արձակ դաշտերը»)

¹ Բանահյուսական սկզբնաղբյուրների բարբառային նրբերանգները 2018 թ. ճշգրտել է լրագրող, բանաստեղծ, արմատներով արցախցի Ռուբեն Գրիգորյանը:

Արցախի հրաշապատում և իրապատում հեքիաթների շարքը հրատարակվել է նախկինում՝ «Հայ ժողովրդական հեքիաթներ» գիտական բազմահատորյակի 5–7 հատորներում (Երևան, 1966–1979), ընդ որում՝ «Արցախ-Ուտիք, Շուշի, Արցախ, Գանձակ» (կազմողներ՝ Ա. Նազինյան, Վ. Սվազլյան), հ. 6, Երևան, 1973:

³ Վ. Սվազլյան. Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Երևան, 1994, էջ 11–12:

և կամ ավելի կարճ՝ «Վոտ ի վսյո» («Ահա և բոլորը») ուսուցանում են արտահայտություններ: Անշուշտ, սա նոր ուսուսական միջավայրի ազդեցությունն է, որը նաև առիթ է տվել զգալի չափով փոխառյալ բառերի և արտահայտությունների ներթափանցմանը. օրինակ՝ «մոմենտ» (պահ), «ստոլ» (սեղան), «ուժե» (արդեն), «կամպանիա» (ընկերություն), «կուկլա» (տիկնիկ), «կակ-ռազ» (հենց այդ), «պրեդանիե» (օժիտ), «յելի-յելի» (հազիվ-հազ), «մադարիչ» (նվեր), «կառուուլ» (պահակ) և այլն: Նման ներթափանցումներն օրինաչափ են, հատկապես՝ երկար տարիներ համակցությամբ ապրողների կենցաղում և լեզվական մշակույթում:

Իրապատում հեքիաթներից ուշագրավ է հատկապես «Հլուվերի պաղաս-խանը Շահ Աբասին» («Ալևորի պատասխանը Շահ Աբասին»): Իր զավթողական արշավանքներից վերադարձող Շահ Աբասը ծիծաղում է արմավի ծառ տնկող ալևորի վրա՝ ասելով, թե նա չի հասցնի համտեսել իր տնկած ծառի պտուղը, քանի որ նրա մահը մոտ է: Արցախցի իմաստուն ալևորը պատասխանում է. «Ա՛յ, ախպեր, մըհենգ էլ ես ծրծաղում քեզ յրա: Մըր պապերը ծառ ըն տնգալ, մուենք բարը կերալ ընք: Մհենգ էլ մուենք բիդի տնգինք, հանցու մրեր հետագաները օտին» («Ա՛յ, եղբայր, հիմա էլ ես ծիծաղեմ քեզ վրա: Մեր պապերը ծառ են տնկել, մենք պտուղը կերել ենք: Հիմա էլ մենք պիտի տնկենք, որ մեր հետնորդները ուտեն»):

Գրառված երկու առակները՝ «Վըթեսն»⁴ ու «մուկունը» և «Վըթես մոքիրը» համահայկական հայտնի սյուժեներ են, որոնց միայն գործող անձինք՝ կենդանական կերպարներն են փոխված, այսինքն՝ տեղայնացված, հարմարեցված են Արցախի կենդանական աշխարհին:

II. Քնարական բանահյուսության տեսականին ևս իր բնույթով բազմազան է և համահունչ համահայկականին: Այս բաժնում առկա են՝ օրորոցայիններ, սիրային, հարսանեկան, ծիսական, պանդխտության, աշխատանքային երգեր, կատակերգեր նաև հայրենասիրական ու զինվորի երգեր:

Քնարական այս երգերի մեջ գեղարվեստորեն պատկերվում են հայրենի բնության գեղեցկություններն ու առօրյա կյանքի ու կենցաղի տարաբնույթ երևույթները.

«Քնի՛ր ու աճի՛ր,
Շուտ արա, բալ՛ես,
Կուռնկներն էկան,
Թողին մըրեր երկիր
Սև ամպով պատած:

Քնի՛ր ու աճի՛ր,
Դարդերս քչիր,
Շուտ արա, բալ՛ես:
Հուլունք եմ կապել,
Կախել օրոցքից,
Քո զար աչքերից

⁴ Վըթես (բրբ.) – ինքնապաշտպանվելու համար տհաճ հոտ արձակող միջատ:

Որ հեռու մնա
Թշնամու աչքից»:

Սակայն թշնամու կերպարն արտացոլվել է նույնիսկ հետևյալ գողտրիկ օրորոցայինում, երբ մայրը չքնող երեխային վախեցրել է դաժան խանի կերպարով.

«Լա՛յ-լա՛յ-լա՛յ արա, քո՛ն իլ, Զելիմ խանը կիկյա՛ քեզ տանե. Բա՛յ, բալա՛, բա՛յ, կուկլա բալա, Բա՛յ, բալա ջան, բա՛յ, ջան, բալա՛»:	«Լա՛յ-լա՛յ-լա՛յ արա, քնի՛ր, Զելիմ խանը կգա՛ քեզ տանի, Բա՛յ, բալա՛, բա՛յ, կուկլա բալա, Բա՛յ, բալա ջան, բա՛յ, ջան, բալա՛»:
---	---

Սույն օրորոցայինի կրկներգում «կուկլա» և «բայ» բառերի առկայությունը վկայում է ռուսական օրորոցայինի ազդեցությունը:
Սիրային երգի օրինակ է.

«Նազի՛կ, Նազի՛կ, նազ մի՛ անի,
Չուխեդ⁵ քաշի, թոզ⁶ մի՛ անի»:

Գրառված սիրային երգի այս տողերն ակամայից հիշեցնում են կիլիկյան Քեսապի պարերգի նմանատիպ պատկերը.

«Ամա՛ն, իշգե՛յն, Ժիր վաթանը յո՞ գըննօ. Շյուդ մը՛ ժգըդվա, Հախչօրիտ մըրօդ գըննօ» ⁷ :	«Ա՛յ, աղջի՛կ, ձեր հայրենիքը որտե՞ղ կլինի, Շատ մի՛ շորորա, Քղանցքդ կփոշոտվի»:
--	---

Այս նմանությունը վկայում է ժողովրդական միևնույն արմատների մասին:

Պյատիգորսկի Արցախի հայերը կենցաղային և ծիսական երգերից հիշում և երգում էին «Զեզ՝ Բարեկենդան, մեզ՝ բարի Չատիկ» ավանդական տոնական երգը, թեպետ ծիսական տոներն այլևս նախկինի պես հանգամանորեն չէին կատարվում:

Այնինչ, հիշում և կատարում էին Համբարձման տոնին երգվող հատուկ կենտ քառյակներ, որոնց համանման տարբերակներն առկա են հայկական բանարվեստում.

«Ախշի, ո՞ւր ես, դուն հուր ես,
Ես ծարավ եմ, դուն ջուր ես,
Համբարձում օրը ո՞ւր ես,
Արի ըստեղ պար բռնենք:
Հայլո՛ ջան, հայլո՛,
Համբարձում, հայլո՛»:

⁵ Չուխա (ժող.) – մահուդից երկար վերարկու:

⁶ Թոզ (թուրք.) – փոշի:

⁷ Վ. Սվազլյան. Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, էջ 127, Թ. Չուպեան. Քեսապ, հ. Բ, Հալէպ, 1998, էջ 497–498:

Արցախի հայերը կարոտով էին հիշում բնօրրանում Համբարձման տոնին կատարվող ձեռք ձեռքի բռնած իրենց տոհմիկ երգն ու պարը, քանի որ նոր միջավայրում այլևս նման հավաքական տոնախմբություններ չէին իրականացնում:

Հարսանեկան ծեսը նեղ շրջանակում դեռ պահում էր ավանդական որոշ երանգներ՝ ինչպես, օրինակ, հարսի գլխին շաքար, չիր ու չամիչ, մանրադրամներ տեղացնելու կամ հարսի ոտքի տակ ավսես ջարդելու սովորությունները: Ծիսական արարողակարգը բավական մանրամասն գրի է առնված՝ մեջբերելով հարակցվող երգերը ևս: Հուզիչ է հայրական տանը հարսի հրաժեշտի երգը.

«Վա՛յ, ազի ջա՛ն, տանըմ ըն,
Հորաս, մորաս հանըմ ըն,
Վա՛յ, ազի ջա՛ն, տանըմ ըն,
Ազիդ մորաս հանըմ ըն ...»:

«Վա՛յ, մայրիկ ջա՛ն, տանում են,
Հորիցս, մորիցս բաժանում են,
Վա՛յ, մայրիկ ջա՛ն, տանում են,
Սիրելի մորիցս բաժանում են ...»:

Արցախում, երբ հարսը ոտք է դրել փեսայի տուն, մոմավառություն են կատարել և վառված մոմերով դիմավորել փեսային՝ երգելով.

«Վա՛յ, ազի ջա՛ն, աչքդ լո՛ւս,
Տղետ պերենք, հարստ պերենք,
Եկած պարիկամներէտ աչքըլո՛ւս»:

«Վա՛յ, մայրիկ ջա՛ն, աչքդ լույս,
Տղիդ բերինք, հարսիդ բերինք,
Եկած բարեկամներիդ աչքը լույս»:

Բանասաց Աննա Ակոպովան պատմել է. «Արցախում տղի տանը հաց ըն օտըմ, պրծնըմ⁸, սազանդարը⁹ նստըմ ա, տղի բարեկամները նվերներ են տալիս՝ մեբել¹⁰, սնդուկ, կուվչին¹¹, փող և այս բոլորի մասին բարձրաձայն հայտարարում է «տեփ խփողը»¹²: Երբ հարսը ներս է մտնում, նրա ոտքերի տակ ավսես են ջարդում, խմում են խնամիների, հարս ու փեսի կենացները...»:

Աշխատանքային երգերը ևս հիմնականում համահայկական ավանդական բնույթ ունեն. «Ձիգ տուր, քաշիր, ա՛յ եզո», «Հով արա, Զեյրան ջա՛ն» և կամ՝ կարագ հարելու «Մոթալ¹², մոթալ, ջա՛ն մոթալ» երգերը:

Հանապազօրյա հաց թխելու գործընթացը միահյուսվել է սիրած յարի պանդխտության գնալու հետ.

«Հաց ըմ թըխալ՝ կյարի ա,
Իմ յարըս սափարի ա,
Սափար էրթալիտ մըեռնիմ.
Խոսքերքտ շաքարի ա»:

«Հաց եմ թխել՝ գարի է,
Իմ յարը պանդուխտ է,
Պանդխտությանդ մեռնեմ.
Խոսքերդ շաքարից են»:

⁸ Սազանդար (բրբռ.) – նվագող:

⁹ Մեբել (ռուս.) – կահույք:

¹⁰ Կուվչին (ռուս.) – ջրաման:

¹¹ Տեփ խփող (բրբռ.) – թմբկահար:

¹² Մոթալ – հատուկ եղանակով պատրաստվող պանիր:

Գրառված երգերից մեկում, ամենայն հավանականությամբ, ակնարկվում են ազգամիջյան լարված փոխհարաբերությունները.

«Ա՛յ, տղա՛, տոն արի,
Վընեներտ շաղավն արի,
էս թաղը դըմբդալ ա.
Երէ թաղավն արի»:

«Ա՛յ, տղա՛, տուն արի,
Ոտքերդ՝ շաղավն արի,
Այս թաղում իրարանցում է.
Վերին թաղովն արի»:

Արցախում հարազատների կողմից չի խրախուսվել տղամարդկանց պանդխտելը, հատկապես նավթարդյունաբերական կենտրոն՝ Բաքու, ուր բազմաթիվ հայեր ապրուստի հոգսից ստիպված գնում էին աշխատանք գտնելու.

«Ծառի տակը լաքի յա,
Իմ յարը Բաքի յա,
Բաքվա սարը թող չոռ կյա.
Բալքի իմ յարը տոն կյա»:

«Ծառի տակը զով է,
Իմ յարը Բաքվում է,
Բաքվի սարը թող չուռ գա.
Գուցե իմ յարը տուն գա»:

Պյատիգորսկի Արցախի հայերի երգացանկում առկա էին նաև գրական լեզվով նորօրյա կոլտնտեսային կյանքին նվիրված, ժողովրդականություն վայելող երգեր.

«Ծլել է արտս, ծփում է արտս,
Կորել է դարդս, ջան,
Եկել է նորը, խնդություն օրը,
Գյոզալ¹³ տրակտորը, ջան ...»:

Խորհրդային ժամանակների նորօրյա ինքնատիպ երգերից է նաև Կանանց միջազգային տոնին մարտի 8-ին նվիրված երգը.

«Լաչակ¹⁴ բա՛ց, ա՛յ նանի¹⁵,
Քիթկալդ բա՛ց, ա՛յ նանի,
Թող արև տա, չորանա
Արցունք ու լաց, ա՛յ նանի:

Էնքան չանա՞¹⁶ կապ մնաց,
Տափակել ա, ա՛յ նանի,
Քիթ-բերանդ ծռմուկել,
Տե՛ս վիճակդ, ա՛յ նանի:

...Հոկտեմբերը քեզ համար
Նոր կյանք բերավ, ա՛յ նանի,
Ցուրտ ձմեռը վերացավ,
Գարուն դարձավ, ա՛յ նանի:

¹³ Գյոզալ (ժող.) – գեղեցիկ:

¹⁴ Լաչակ (ժող.) – գլխաշոր:

¹⁵ Նանի (ժող.) – մայրիկ:

¹⁶ Չանա (թուրք.) – ծնոտ:

Ականջներդ բա՛ց արա,
էսօր մարտի 8-ն ա,
Շաբաշ¹⁷ կանչի, ծափ արա,
Կանանց տոնն ա, ա՛յ նանի»:

Առաջին հայացքից նոր իմաստ ու բովանդակություն արտահայտող այս երգի մեջ գարնան զարթոնքի, ձմռան ցրտերի դեմ տարած հաղթանակի, իրական աշխարհի զգացողության խորհուրդն է ամփոփված: Ավանդական բանահյուսության մեջ բազում գործառնություններով օժտված Նանին կոչ է արվում ազատվել կանացի հմայքը խաթարող ավելորդ հանդերձանքից: Ժողովրդական երգ ու պարով, խրախճանքով վերահաստատվում է գարնան զարթոնքը և կանանց տոնը դիմավորելու նրանց պատրաստակամությունը: Այստեղ, միաժամանակ, նկատելի է ինքնագիտակցության եկող և զարթոնք ապրող նահապետական հայ կնոջ անխղճ կապն ու մերձեցումը բնության հետ:

Պյատիգորսկում տարածված կատակերգերից է.

«Քույրիկիս՝ տուֆլի¹⁸, կալոշ¹⁹,
Մայրիկիս՝ կոշիկներ,
Իսկ հայրիկիս՝ մի զույգ տրեխ,
էն էլ փոկեր չունենա...»:

Արևմտահայոց՝ հիմնականում պոլսահայոց²⁰ շրջանում տարածված և զավեշտական տարաբնույթ պատկերներով շարահյուսված այս երգը նաև երգում էին արցախյան երիտասարդները:

Պյատիգորսկում Արցախի հայերն իրենց ավանդական ապրելակերպին խորթ և անհարիր երևույթներն անվարան երգիծում էին.

«Կիսլավոդսկի օրիորդները
Ժամը տասին ըն զարթնում,
Մաշքը²¹ կոտրած կատվի նման,
Ման են կյալի բուլվարում²²...»:

Ռուսական նոր միջավայրը, մարդկային նոր հարաբերությունները ևս լեզվական նորամուծությունների պատճառ են դարձել.

«Ծիտը ծառին տիտիկ արավ,
Ախոտնիկը²³ ուբիտ արավ²⁴,
Վրեննան փռնավ, դամոյ²⁵ տարավ,

¹⁷ Շաբաշ (գվռ.) – երաժիշտներին տրվող դրամական պարգև:

¹⁸ Տուֆլի (ռուս.) – կոշիկ:

¹⁹ Կալոշ (ռուս.) – կրկնակոշիկ:

²⁰ Վ. Մվազլեան. Պոլսահայոց բանահիւսութիւնը, Երևան, 2000, էջ 427–428:

²¹ Մաշք (բրբռ.) – մեջք:

²² Բուլվար (ռուս.) – ճեմելիք:

²³ Ախոտնիկ (ռուս.) – որսորդ:

²⁴ Ուբիտ անել (ռուս.) – սպանել:

²⁵ Դամոյ (ռուս.) – դեպի տուն:

Ժարովնիկում²⁶ ժարիտ արավ²⁷,
 Նստեց, մի լավ կուշիտ արավ²⁸,
 Ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ»:

Ժամանակի ընթացքում նրանց բառապաշարի մեջ տեղ են գտել «ախտոնիկ», «ուբիտ անել», «գամոյ», «ժարովնիկ», «ժարիտ անել», «կուշիտ անել» և այլ բառեր ու բառակապակցություններ:

Սակայն Պյատիգորսկ գաղթած արցախցիները չէին ընդունում, որ իրենք ակամայից տուրք են տալիս լեզվական փոխառություններին և ասում էին. «Նաաբարոտ²⁹, մուկնք չիստի³⁰ արմյանսկի³¹ ընք խոսում»:

Թեպետ Պյատիգորսկ գաղթած արցախցիների բառապաշարը 1964 թ. ուսերենից արդեն զգալի ազդեցություններ էր կրել, սակայն նրանք իրենց ազգային ինքնությունն ու արցախցու արժանապատվությունը շարունակում էին բարձր պահել: Այդ հանգամանքն իր գեղարվեստական արտացոլումն է գտել հատկապես նրանց հայրենասիրական և զինվորի երգերի մեջ:

Արցախահայերից գրի եմ առել նաև 1905 թ. Ասկերանի կիրճում կատարված պատմական հայտնի իրադարձությանը նվիրված երգի մի դրվագ, որտեղ պատմվում է, թե ինչպես Շուշիի հայերից թալանված երկու ֆուրգոն ավարով ջարդարար թաթար-ազերի բեկերի մեծաթիվ հեծելազորը գալիս, հասնում է խոջալու: Քանի որ հրազենի ձայն չէր լսվում, մտածում են, որ կարող են ապահով անցնել Ասկերանի կիրճը: Դարանակալած հայ մարտիկները քաջորդի Համազասպի մշակած խելացի ռազմավարությամբ և Վարդանի աջակցությամբ, շրջափակում, օղակի մեջ են վերցնում թշնամուն ու ոչնչացնում ավելի քան 200 թաթար-ազերիներին:

«Ինչպես կորյուն քաջ Վարդանը,
 Համազասպը քաջանուն
 Ասկերանի բերդի միջից
 Կոտորեցին թշնամուն»:

Զինվորի երգի ինքնատիպ նմուշ է նաև գրառված հետևյալ երգը, որտեղ հիշատակվում են Հայաստանի հերոսական անցյալն ու արցախահայ երիտասարդի ազգի համար զոհվելու պատրաստակամությունը.

«Սուսերս տո՛ւր, մայրի՛կ,
 Մոսիսս տո՛ւր, քույրի՛կ,
 Հանուն ազգիս թե չզոհվեմ,
 Հապա ինչո՞ւ ծնվեցի ես»:

Գրի առնված բանահյուսական նյութերի մեջ Հայրենական պատերազմի տարիներին ստեղծված երգերը ևս իրենց ուրույն տեղն են գտել արցախցիների երգացանկում:

²⁶ Ժարովնիկ (ռուս.) – տապակ:

²⁷ Ժարիտ անել (ռուս.) – տապակել:

²⁸ Կուշիտ անել (ռուս.) – ուտել:

²⁹ Նաաբարոտ (ռուս.) – ընդհակառակը:

³⁰ Զիստի (ռուս.) – մաքուր:

³¹ Արմյանսկի (ռուս.) – հայերեն:

«Նեմե՛ց³², նեմե՛ց, կուղա՞ տի³³,
Գիղացե՛լ ես, թե Բըղըղորսկը³⁴,
Հավի բուղա՞ն. դե՛ մին նազաղ³⁵,
Բոմբը³⁶ կտամ կնդազաղ³⁷»:

Եվ կամ՝

«Առավոտյան ժամը ութին
Ինձ վայենկոմատ³⁸ կանչեցին,
Վե՛շ մեշոկը³⁹ չալակս տվին,
Դեպի Կերչը հուղարկեցին,
Երբ որ մտանք Կերչի հողը,
Սիրտս մտավ մահվան դողը ...»:

Երկարաչունչ այս երգի ավարտին, անօգնական ու անհույս ընկած մահամերձ հայ զինվորը խնդրում է.

«Ընկերնե՛ր ջան, հավաքվեցե՛ք,
Դուղուկները փչի՛լ տվե՛ք,
Գերեզմանիս քարին վրեն
Սայաթ-Նովեն երգի՛լ տվե՛ք»:

Եվ նա հոգին ավանդում է՝ շշնջալով.

«Զե՛մ մոռանա Մայր Հայաստա՛ն»:

Մայր Հայաստանի, բնօրրան Արցախի կարոտը մշտապես ուղեկցել է Պատիգորսկ գաղթած արցախցիներին: Նրանց մեջ կային նաև ինքնուստեղծագործողներ, ինչպիսին էր Աշխեն Վանիլովան: Նա իր մտորումներն արտահայտում էր չափածո հանգավորմամբ և երգային կատարումով: Նրա երգած երկերը սեղմ տողերի մեջ խտացված էին արցախահայոց կրած անլուր տառապանքները, նրանց հարկադրված գաղթը բնօրրանից դեպի Պատիգորսկ.

«Դարձոտ, կարոտ էս կյանքի մեջ
Տանջվեցինք մոռնք անհանգիստ,
Դադված, էրված ջիգյարներով
Մնացինք մոռնք անհանգիստ:

Մոռնք շատ մընե՛ծ ցեղ ունեինք,
Բոլորին էլ կուրցըրինք.

³² Նեմեց (ռուս.) – գերմանացի:

³³ Կուղա տի (ռուս.) – այդ ո՞ւր:

³⁴ Բըղըղորսկ – Պատիգորսկ:

³⁵ Նազաղ (ռուս.) – ետ:

³⁶ Բոմբ (ռուս.) – ռումբ:

³⁷ Կնդաղ (բրեռ., ծաղր.) – գլուխ:

³⁸ Վայենկոմատ (ռուս.) – զինկոմիսարիատ:

³⁹ Վեշ մեշոկ (ռուս.) – ուսապարկ:

էկանք-հասանք Պըտիղորսկ,
Նեոլթե⁴⁰ լի մունք կարել չընք
Հանգիստ մնանք տանջանքից:

Բավակա՛ն է, մեր ծնողներն
Ինչքան արյուն թափեցին,
Ժողովրդին մեր փչացրին,
Մըեզ տնավեր արեցին:

Մենք պիտի կռվենք
Ինչքան ուժ ունենք,
Մեր լո՛խ կորուստները
Փառքով ե՛տ բերենք»:

Անհատական այս ստեղծագործությունն ավարտը լավատեսական է և լուսավոր, որն այնքան բնորոշ է Արցախի հայությունը. ասես այն աղոթք լինի առ Աստված: Մաղթանք է՝ ուղղված նաև համայն մարդկությունը.

«Թող մեր անգին Հայոց ազգին
էն ուժն ու պատիվն ինի,
Որ իլա՛լ ա հին-հին վախտից,
Թող փրկի Տերը սաղ աշխարհին,
Լոխ էլ ապրին խաղաղ, երջանիկ»:

III. Ասույթային բանահյուսությունն բաժնում ուշագրավ են երեք տարեկան Անժելա և Մարգարիտա Ավագյանց զույգ քույրերից իմ գրառած մանկական թոթովանքները: Երբ փոքրիկ Անժելային ես հարցրեցի իր անունը, նա շուտասեղանիկ պես պատասխանեց.

«Փըլջմեցի⁴¹ դեղո կանեն ծոռն ըմ,
Փըլջմեցի Ղազարեն ծոռն ըմ,
Փըլջմեցի Անդրեյեն թոռն ըմ»:

Իսկ երբ նրա զուգակից Մարգարիտային հարցրեցի.

«— Մայրդ որտե՞ղ է աշխատում:

— Ռոդդոմ⁴²:

— Ի՞նչ է անում:

— Խոխա ա պըռնըմ (մանուկ է բռնում)»:

Պյատիգորսկի Արցախի հայերի հանելուկներին բնորոշ է իրենց բնօրրանի կենդանական և բուսական աշխարհի գեղարվեստական արտացոլումը, որտեղ գաղտնագրված կերպով ներկայանում են արցախցիների կյանքին ու կենցաղին հատուկ պարագաները: Առանձնապես յուրօրինակ է հանելուկների հարցադրման սկզբնաձևը.

⁴⁰ Նեոլթե⁴⁰ լի (ռուս.) — մի՞թե:

⁴¹ Տեղավայր:

⁴² Ռոդդոմ (ռուս.) — ծննդատուն:

«Մըեզ մինն օնինքյ՝ կըկընանչի,
Կըծաղկի սիպտակ, կըկյիրմիրի,
Ետնան ալ կթուխի»:

(Մոչ)

«Մենք մինն ունենք՝ կանաչում է,
Ծաղկում սպիտակ, կարմրում,
Հետո՝ սևանում է»:

Կամ՝

«Մըեզ մինն օնինքյ՝
Աշխարքս չոռ ա կյալիս,
Ուրոգյո՛ւնը կյամ ա
Տոանը վըեր ընգնըմ»:

(Տրեխ)

«Մենք մինն ունենք՝
Աշխարհը ման է գալիս,
Իրիկունը գալիս է
Դուանը վեր ընկնում»:

Ուշագրավ են այլաբանական իմաստ արտահայտող հայաչունչ առածները.

«Աշխատած հացն ա հալալ»:
Կամ՝

«Սարը սարին պտահըմ չի,
Մարթը մարթին պտահըմ ա»:

Եվ կամ՝

«Վըչխարէն տմական օտըմ չըմ.
Քմական մոտէ ա»:

«Վաստակած ապրուստն է արդար»:

«Սարը սարին չի պտահում,
Մարդը մարդուն պտահում է»:

«Ոչխարի դմակից չեմ ուտում.
Հետույքին մոտ է»:

Եվ ի վերջո՝

«Աշխարքը չոռ ա եկալ՝
Դրախտը ուրան վըեղըմը քթալ»:

«Աշխարհը ման եկավ՝
Դրախտը իր հողում գտավ»:

Արցախահայոց առածները բարբառային արտաբերումով առանձին հմայք են ստանում՝ դառնալով տեղային նոր տարբերակներ:
Լավատեսությունը են օժտված օրհնանքները.

«Ազատ, էրզան կյանք ունենաս»:
«Ազատ, երկար կյանք ունենաս»:

Այստեղ ուշագրավ է ազատության գաղափարի առաջնահերթությունը, որը խիստ բնորոշ է ազատատենչ ու լավատես արցախցիներին.

«Հինչ նեղություն քաշըմ ըս,
Վերչըտ բարի թըղ ինի»:

«Ինչ նեղություն, որ քաշում ես,
Վերջդ բարի թող լինի»:

Արցախցին համայն աշխարհի մարդկությունը խաղաղություն և բարօրություն է մաղթում իր համեստ մաղթանքով.

«Երկրագունդը թըղ բարի ըրագավ
ապրի»

«Երկրագունդը թող բարի երագով
ապրի»:

Եզրակացություն

Պատիգորսկի գաղթած Արցախի հայերի շրջանում 1964 թ. կատարած ժողովրդագիտական անձնական գրառումներն ու գիտարկումները հիմք են տալիս եզրակացնելու.

1. Արցախի հայերի բանահյուսությունն իր արմատներով նույնական է Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայության մշակութային հնամենի ավանդներին: Հանգամանք, որը վկայում է նրանց ազգային-ավանդական ակունքների նույնականության ու հայկականության մասին,
2. Պատիգորսկի Արցախի հայերի բանահյուսական նշխարները ոչ միայն բազմաթանր են ու բազմազան, այլև ինքնատիպ են իրենց բնույթով,
3. նոր՝ ուսական միջավայրին ինտեգրվող Արցախի հայերի լեզվական միտումներն արդեն իսկ զգացնել են տալիս նրանց բանավոր խոսքի մեջ:

Վերժինե Սվազլյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության տեսության և պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ արևմտահայոց բանավոր ավանդույթ և պատմական հիշողություն: Հեղինակ է 26 մենագրության և շուրջ 250 հոդվածի:
vsvaz333@yahoo.com

REFERENCES

- Cholakean Y. Kesap, h. B, Halep, 1998 (In Armenian).
 “Hay zhoghovrdakan hekiatner” gitakan bazmahatoryaki 5–7 hatoner (Yerevan, 1966–1979. “Artsakh-Utik” (Shushi, Artsakh, Gandzak). kazmoghnar՝ A. Nazinyan, V. Svazlyan, h. 6, Yerevan, 1973 (In Armenian).
 Svazlyan V. Polsahayots banahyusoutyune, Yerevan, 2000 (In Armenian).
 Svazlyan V. Kilikia. Arevmtahayots banavor avandutyune, Yerevan, 1994 (In Armenian).

ФОЛЬКЛОРНЫЕ РЕЛИКВИИ ПЕРЕСЕЛИВШИХСЯ В ПЯТИГОРСК АРЦАХСКИХ АРМЯН (По материалам, записанным автором)

ВЕРЖИНЕ СВАЗЛЯН

Резюме

Ключевые слова: Пятигорск, Карабах, Арцах, Россия, сказитель, устная традиция, эпический-повествовательный, лирический, фразеологический фольклор, армянский диалект.

В 1964 г. дирекция Института археологии и этнографии Академии наук Армении командировала меня в Пятигорск (Ставропольский край, Россия) с целью изучения быта и фольклора живущих там представителей армянского этноса. Приехав в Пятигорск, я поинтересовалась и узнала, что там есть квартал, где живут карабахские (арцахские) армяне. Меня как фольклориста-этнографа интересовало, когда и откуда они переселились в Пятигорск, каким этнокультурным изменениям подверглись в условиях совместного с местными жителями бытия, сохранили ли верность традициям родины-колыбели и т. д. В течение 20-и дней научной экспедиции я познакомилась с 12 сказителями – представителями старшего поколения, и записывала материалы (100 единиц), сохраняя особенности диалекта.

Материалы, являющиеся объектом исследования, носят *эпический-повествовательный, лирический и фразеологический* характер и позволяют заключить следующее:

1. фольклор армян Арцаха своими корнями восходит к культурным традициям армян Западной Армении и Киликии, что свидетельствует об идентичности их национальных и традиционных истоков, а также об их принадлежности к армянской культуре;
2. фольклорные реликвии арцахских армян Пятигорска не только разнообразны и многожанровы, но и самобытны по своему характеру;
3. влияние новой, русской среды в какой-то мере уже отразилось на устном народном творчестве армян Арцаха.

Вержине Свазлян – д. филол. н., ведущий научный сотрудник отдела теории и истории армянского народного фольклора Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: устное народное творчество и историческая память западных армян. Автор 26 монографий и около 250 статей. vsvaz333@yahoo.com

RELICS OF THE ORAL TRADITION OF THE ARTSAKH ARMENIANS EMIGRATED TO PYATIGORSK (According to the materials recorded by the author)

VERJINE SVAZLYAN

S u m m a r y

Key words: Pyatigorsk, Karabakh, Artsakh, Russia, narrator, oral tradition, epic, lyric and saying folklore, Armenian dialect.

In 1964, under the auspice of the Institute of Archaeology and Ethnography of the Academy of Sciences of Armenia, I have a scientific trip to Pyatigorsk to study the ethnic Armenians living there. When I reached my destination, I was informed that there was a district where Armenians of Karabakh (Artsakh) lived.

For me, as a folklorist-ethnographer, it was interesting to know what changes they had undergone under the conditions of coexistence with the local people, whether they remained sincere to the traditions of their cradle, etc. In 20 days of scientific expedition I have written down from the 12 Artsakh Armenian narrators of Pyatigorsk more than 100 units of folklore materials in their dialectal nuances.

The said materials are of *epic*, *lyric* and *saying* characters and provide grounds to conclude that:

1. The folklore of the Artsakh Armenians is identical by its roots to the cultural precepts of the Armenians of Western Armenia and Cilicia, a circumstance which testifies to the identity and Armenianness of their traditional national sources.
2. The folklore relics of the Artsakh Armenians of Pyatigorsk are not only multigenre and multifarious, but are also unique by their nature.
3. The influence of the new, Russian environment at some extent was already reflected in the oral folk art of the Artsakh Armenians.

Verjine Svazlyan – Doctor of Sciences in Philology, Leading Researcher of the Department of Theory and History of the Armenian Popular Folklore at the NAS RA Institute of Archaeology and Ethnography. Scientific interests: the oral folklore and the historic memory of Western Armenians. Author of 26 monographs and over 250 articles. vsvaz333@yahoo.com